ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2020-2021 ուստարի)

11-րդ դասարան (տևողությունը՝ 180 րոպե)

ա) Հայոց պատմություն (20 միավոր)

1. Ե՞րբ է Արգիշտի 1-ինը հաղթարշավով հասել Պարսուա երկիր. 0,5 մ.
   ա/ Ք.ա. 791 թ. բ/ Ք.ա. 782 թ. գ/ Ք.ա. 785 թ. դ/ Ք.ա. 781 թ.
2. Ո՞ր նշանավոր պատմիչն է վկայում միջազգային առևտրին Հայաստանի մասնակցության ջրային ճանապարհի մասին. 0,5 մ.
   ա/ Քսենոփոն բ/ Հերոդոտոս գ/ Պլուտարքոս դ/ Մովսես Խորենացի
3. Որտե՞ղ է կենտրոնացրել Անտոնիոսը իր 100.000-անոց բանակը. 0,5 մ.
   ա/ Կարին գավառ բ/ Բասեն գավառ գ/ Փրաասպա դ/ Արտաշատ
4. Ո՞վ է ձերբակալել Մերուժան Արծրունուն. 0,5 մ.
   ա/ Սմբատ Բագրատունի բ/ Վահան Մամիկոնյան գ/Շապուհ 2-րդ դ/ Վաղես կայսր
5. Որտե՞ղ էր գտնվում Կիլիկիայի Լևոն 6-րդ թագավորը նախքան Սիս հասնելը. 0,5 մ.
   ա/ Ադանա բ/ Փարիզ գ/ Կիպրոս դ/ Կահիրե
6. Քանի՞ մարտական խմբեր ուներ Արմենական կուսակցությունը Վանի և Շատախի գյուղերում. 0,5 մ.
   ա/ 20 բ/ 150 գ/ 90 դ/ 12
7. Որտե՞ղ է նահատակվել Քրիստափոր Միքայելյանը. 0,5 մ.
   ա/ Տրապիզոն բ/ Վիտոշ լեռան լանջեր գ/ Բեռլին դ/ Սասուն
8. Ե՞րբ են Արևմտյան Հայաստանի տեսուչներ ընտրվել Հոֆը և Վեստենենկը. 0,5 մ.
   ա/ 1912 թ. մայիս բ/ 1913 թ. սեպտեմբեր գ/ 1914 թ. ապրիլ դ/ 1914 թ. հուլիս
9. Ե՞րբ է Տարոնի իշխանությունը միացվել Բյուզանդական կայսրությանը: 0,5 մ.
10. Ինչպե՞ս էր կոչվում Ներսես Աբելյանի հրատարակած քաղաքական լրագիրը: 0,5 մ.
11. Ո՞վ է 1904 թ. Սասունի ապստամբության հյուսիսային ճակատի հրամանատարը: 0,5 մ.
12. Որտե՞ղ է սովորել հայտնի հայդուկ Գևորգ Չավուշը: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա/ Գում Գափուի ցույցը
    բ/ Դիարբեքիրում հայկական 120 գյուղերի ավերումը և կողոպտումը
    գ/ Զեյթունի զորանոցի գրավումը
    դ/ Շենիկի գյուղապետ Գրգոյի զոհվելը
    ե/ Մայիսյան բարենորոգումների նախագծի հանձնումը սուլթանին
    զ/ Համիդիե գնդերի ստեղծումը
    է/ Բաբը Ալիի ցույցը
    ը/ Խանասորի արշավանքը
    թ/ Հայ առաքելական եկեղեցու գույքի բռնագրավման օրենքի ընդունումը

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
    1. «Պատմություն»
    2. «Կանոնագիրք Հայոց»
    3. «Տիեզերական պատմություն»
    4. «Պատմութիւն նահանգին Սիսական»
    5. «Ամռան հատոր»
    6. «Տարեգիրք»

    ա. Հովհան Գ Օձնեցի բ.Ստեփանոս Օրբելյան գ. Գրիգոր Տաթևացի
    դ. Ղևոնդ ե. Սմբատ Գունդստաբլ զ. Վարդան Արևելցի

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
    ա/ Իսրայել Օրին Հայաստան չի վերադառնում, այլ Կ. Պոլսից ուղևորվում է Ֆրանսիա, որից հետո անցնում Իտալիա և անցնում է զինվորական ծառայության:
    բ/ 1723 թ. հունիսին թուրքական բանակը գրավում է Գանձակը և շարժվում դեպի Թիֆլիս:
    գ/ Ազատագրական ծարժման նշանավոր գործիչներ Հովսեփ Արղությանը և Շահամիր Շահամիրյանը բանակցություններ էին վարում ռուսական պետական գործիչների հետ:

դ/ 1826 թ. Երևանի խանի զինված ուժերը ներխուժում են Շիրվանի և Փամբակի գավառներ:
ե/ 19-րդ դ. առաջին կեսի ցարական օրենքով Արևելյան Հայաստանում հողի սեփականատեր են ճանաչվել կալվածատերերը, իսկ նրանցից կախյալ գյուղացիներին տրվել է միայն հողից օգտվելու իրավունք:
զ/ Էջմիածնի կաթողիկոսարանի տվյալներով՝ 1876 թ. Օսմանյան կայսրությունում ապրում էր 3 միլիոն հայ, որից 2 միլիոնը՝ Արևմտյան Հայաստանում:
է/ 1878 թ. փետրվարի 19-ին կնքված Սան Ստեֆանոյի պայմանագրով Օսմանյան կայսրությանը վերադարձվեցին Էրզրումը և Բասենը:
ը/ 1898 թ. Թիֆլիսում գումարված երկրորդ ընդհանուր ժողովի որոշմամբ՝ ՀՅԴ-ն անցավ ընդհանուր՝ համահայկական ապստամբության համար Երկրի ուժերի կազմակերպմանը:
թ/ 1724 թ. Երևանի գրավումից հետո թուրքական զորքերը շարժվում են դեպի Սյունիք և Ատրպատական:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 սխալ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)
ա/ Բագրատունյաց Հայաստանում պետական կառավարման համակարգում կարևոր էին իշխանաց իշխանի և սպարապետի պաշտոնները:
բ/ Բագրատունիների օրոք բանակը բաղկացած էր արքունական և նախարարական գնդերից:
գ/ Թագավորական տիրույթներից հավաքագրված ռազմիկներից կազմված գունդը կոչվում էր արքունական:
դ/ Քաղաքի կառավարող մարմինը կոչվում էր մուհթասիբ:
ե/ Հայ նախարարներից բռնագրավված տիրույթներից արաբների ստեղծած վարչաքաղաքական միավորները կոչվում էին ամիրայություններ:
զ/ Զորահրամանատարներ նշանակված մելիքական տոհմի կրտսեր ներկայացուցիչները կոչվում էին հազարապետ, հարյուրապետ, բեկ:
է/ Բարձրագույն դատական ատյանը մաս էր կազմում Կիլիկիայի հայոց պետական կառավարման գլխավոր մարմնի, որը կոչվում էր արքունից:
ը/ Կիլիկյան Հայաստանի արքունի քարտուղարության գործակալության գլխավոր պաշտոնյային կոչում էին կանցլեր:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա/ Առաջին Հայքի կենտրոնը Հուստինիանուպոլիսն էր:
բ/ Վահան Մամիկոնյանից հետո իշխանությունը 6-րդ դ. սկզբին անցնում է նրա եղբորը՝ Վարդ Պատրիկին:
գ/ 591 թ. պարսկա-բյուզանդական բաժանումից հետո ստեղծված «Ներքսագոյն Հայք» վարչական միավորը զբաղեցնում էր Այրարատ նահանգի մեծ մասը:
դ/ Սուրեն մարզպանը սպանել է Մամիկոնյանց տեր Վահանի որդուն՝ Մանվելին:
ե/ Խոսրով Անուշիրվանը վերսկսված պարսկա-բյուզանդական պատերազմի ժամանակ ներխուժում է Հայաստան և, անցնելով՝ Արտազ և Բագրևանդ գավառները, հասնում է Կարին, իսկ այնտեղից՝ Մելիտինե:
զ/ 639 թ. Թեոդորոս Ռշտունին վերամիավորեց Հայաստանի արևմտյան և արևելյան մասերը, իսկ նստավայրն էր Դվինը:
է/ Արաբների արշավանքների արդյունքում, Բյուզանդական կայսրությունը, չսթափվելով խալիֆայության կրած պարտությունից, շարունակեց իր նվաճողական քաղաքականությունը Հայաստանի հանդեպ:
ը/ Թեոդորոս Ռշտունին գնում է Դամասկոս՝ Մուավիայի մոտ, և որպես հայոց իշխան՝ Հայաստանի հետ միաժամանակ իշխանություն ստանում նաև Վիրքի ու Աղվանքի վրա՝ մինչև Ճորա պահակն ընկած տարածքները:
թ/ Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի օրոք կառուցվեց Թալինի նշանավոր եկեղեցին:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)
Արարատյան գունդը հասնելով Իգդիր մտավ գեներալ Նիկոլաևի զորաջոկատի կազմը, որն առաջադրանք էր ստացել հարձակվելու Վանի ուղղությամբ:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
Մենք այնպես մաքրազարդեցինք այդ շրջանը, որ ապագայում այնտեղ (հուզումներ)... այլևս տեղի ունենալ չեն կարող:
ա. Որտե՞ղ ստեղծված իրավիճակի մասին է խոսքը:
բ. Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը:
գ. Որքա՞ն խաղաղ բնակիչ է կոտորվել այդ իրադարձությունների ժամանակ:

20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
Միջագետքյան դյուցազնավեպում անմահություն փնտրող հերոս …-ը (1) բռնում է «ճանապարհը դեպի Արատտա», գնում …-ի (2) հոսանքն ի վեր և ճանապարհին հաղթահարում … (3) լեռները:

21. Տրամաբանական խնդիր. *Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 7300 տարեկան է, նախնադարի կոնկրետ ո՞ր պարբերափուլի (ժամանակաշրջանի) ընթացքում է ստեղծվել:* 1 մ.

22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:
բ. Ո՞ր աշխարհն է նրան սահմանակցում արևմուտքում:

23. Տիգրանյան թագով ո՞ր արքայի քանդակն է նկարի ձախ կողմում. 0,5 մ.



24. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ (պատասխանե՛ք տրված հարցերին). 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Ո՞ր միապետն է պատկերված նկարում:
բ. Ո՞ր թվականին է նա գահ բարձրացել:

բ) Համաշխարհային պատմություն (10 միավոր)

1. Ե՞րբ է տեղի ունեցել Պուատիեի ճակատամարտը. 0,5 մ.
   ա/ 751 թ. բ/ 500 թ. գ/ 732 թ. դ/ 800 թ.
2. Ո՞վ էր Հռոմի պապը Խաչակրաց 4-րդ արշավանքի ընթացքում. 0,5 մ.
   ա/ Ինոկենտիանոս 3-րդ բ/ Ուրբանոս 2-րդ գ/ Իսահակ 2-րդ Անգելոս դ/ Ալեքսիոս 1-ին
3. Ե՞րբ է Ռուսիայում քրիստոնեությունը հռչակվել պետական կրոն. 0,5 մ.
   ա/ 882 թ. բ/ 1240 թ. գ/ 988 թ. դ/ 1380 թ.
4. Ո՞վ էր Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարը Վիեննայի վեհաժողովի ժամանակ. 0,5 մ.
   ա/ Դելկասսե բ/ Մետերնիխ գ/ Արմանդ Էմմանուել դ/ Թալեյրան
5. Ո՞վ է 1620 թ. լույս տեսած «Նոր օրգանոն» աշխատության հեղինակը: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)
   1. լեհ
   2. իտալացի
   3. ֆլամանդացի
   4. անգլիացի

   ա. Թոմաս Մոր բ. Կոպեռնիկոս գ. Վեզալիուս դ. Գալիլեյ

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
   ա/ Բաբելոնիայի ռազմաքաղաքական վերելքը սկսվել է Համմուրապի արքայի օրոք:
   բ/ Կլիսթենեսի օրոք 500-ի խորհուրդը դարձել է 400-ի խորհուրդ:
   գ/ Աթենքում պետության գլխավոր գործադիր պաշտոնը կոչվում էր դեմարքոս:
   դ/ Սպարտայի գերագույն օրենսդիր մարմինը ժողովրդական ժողովն էր (արեոպագոս):
   ե/ Միլեթյան դպրոցում աշխարհի նյութական նախահիմք էին համարում որևէ տարր՝ ջուրը, օդը կամ ապեյրոնը:
   զ/ Վերածննդի գեղանկարչության հիմնադիրը Ջոտտոն է:
   է/ 1075 թ. թյուրք-սելջուկները գրավել են Արաբական խալիֆայության մայրաքաղաք Բաղդադը:
   ը/ 1907 թ. Ռուսաստանի նախաձեռնությամբ Հաագայում երկրորդ անգամ հրավիրվել է միջազգային համաժողով:

1	2	3

8. Թվարկե՛ք՝ 2 մ. (4 X 0,5 մ.)
   ա. Երուսաղեմի թագավորությանը ենթակա խաչակրաց պետություններից 2-ը,
   բ. Նրանց պաշտպանության համար ստեղծված հոգևոր-ասպետական միաբանություններից 2-ը:
9. Աշխատանք **1648 թ.** Եվրոպայի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)



   ա. Արևելյան Եվրոպայի այս միացյալ պետական կազմավորումը արևելքում ո՞ր պետության հետ էր սահմանակցում:
   բ. Ո՞ր պետությանն էր պատկանում Բալկանյան թերակղզու զգալի մասը:

10. Հին աշխարհի ո՞ր նշանավոր գործչի դրամն է պատկերված ստորև. 0,5 մ.

11. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա. Ո՞վ է ծաղրանկարում պատկերված անձը:
բ. Ո՞ր պետությունն է ծաղրանկարում պատկերված առյուծի կերպարանքով:
գ. Ո՞վ էր այդ պետության վարչապետը նկարում նկատի առնված իրադարձությունների ժամանակ:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

10.03.2021 թ.